ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 (ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/18) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման և արբանյակային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 26.01.2016թ. N 1/10-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.02.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Միսակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Հովսեփյանը, Խ.Սարգսյանը, Վ.Սամվելյանը, Հ.Շաբոյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Միսակյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

«Յուքոմ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Տերյան 19, բն. 4)

-ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 05.02.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ
		«Յուքոմ» ՍՊԸ
1	Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ	184 900 000
2	Արբանյակային կապի ծառայություններ	39 935 000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Յուքոմ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Յուքոմ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:
4. Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Յուքոմ» ՍՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնահատող հանձնաժողով